

ԱՎԱԳԱՆԻ+

2015

Association of municipal councillors of Armenia, «AVAGANI+» newspaper

թիվ 74

Արմեն Երիցյանը Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում



Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում էր ՀՀ ՏԿՄԻ նախարար Արմեն Երիցյանը: Այցելելով Այգեհովիտ, Վազաշեն, Պառավաքար, Արծվաբերդ համայնքներ, նա աշխատանքային հանդիպում ունեցավ գյուղացիների հետ, իսկ Չինարիում և Մովսեսում հանդիպեց նաև բնակչության հետ: Քննարկվեցին բնակչությանը հուզող բազմաթիվ հարցեր՝ սկսած հարկերից ու տուրքերից, վերջացրած բնակարանների սեփականաշնորհման, նոր ծնվող երեխաներին տրվող նպաստի, հրշեջ-փրկարարական հենակետերի, և, իհարկե, անվտանգության խնդիրներով: Արմեն Երիցյանը ընդգծեց, որ սահմանամերձ համայնքները կառավարության ուշադրության կենտրոնում են և արվում է ամեն ինչ նրանց հուզող խնդիրներին լուծում տալու համար:

Տավուշի մարզի սահմանամերձ Սարիգյուղ, Բերքաբեր, Կիրանց, Ոսկեպար, Բաղահիս, Կոթի, Բարեկամավան, Ոսկեվան, Դովեղ և Բերդավան համայնքներում նախարարը հանդիպեց գյուղացիների և բնակիչների հետ: Քննարկվեցին բնակչությանը հուզող ամենատարբեր հարցեր՝ անվ-

տանգություն, ջուր, գազ, զբաղվածություն, սոցիալ-տնտեսական և կենսապահովման այլ խնդիրներ: Նախարարը լսելով բնակիչներին՝ խոստացավ բարձրացնել հարցերը համապատասխան ատյաններում և հնարավորինս աջակցել համայնքներին:

Համայնքների բնակիչները շնորհակալություն հայտնեցին Արմեն Երիցյանին սահմանամերձ համայնքները ուշադրության կենտրոնում պահելու և սահմանամերձ համայնքների հարկային բեռը բեթակացնելու նախագծի կյանքի կոչմանը աջակցելու համար:

2014 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ կառավարությունը ընդունեց և որոշում, որով սոցիալական աջակցություն է նախատեսվում ՀՀ 32 սահմանամերձ համայնքների բնակիչներին (տես էջ 4): Դրանք, մասնավորապես, հանդիսանում են այն համայնքները, որոնք վերջին հինգ տարիների ընթացքում Արդրեջանի հանրապետության կողմից ենթարկվել են գնդակոծության: Աջակցությունը նախատեսվում է տրամադրել բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի՝ մասնակի և հողի

հարկի ու գույքահարկի ամբողջությամբ փոխհատուցման ձևով:

Որոշմամբ ՀՀ կառավարությունը 2015 թվականի համար նախատեսում է աջակցություն տրամադրել բաժանորդների սպառած գազի ծավալի (մինչև 30 խմ) 50%-ի չափով, իսկ սպառած էլեկտրաէներգիայի ծախսի համար (մինչև 120 կվտ)՝ 50%-ի չափով: Աջակցություն նախատեսվում է տրամադրել նաև այն բաժանորդների համար, որոնք «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բաժանորդ չեն, սակայն հանդիսանում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի բաժանորդներ: Վերոնշյալ բաժանորդների համար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին 2015թ. հունվարի 1-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար էլեկտրաէներգիայի ծախս ունեցող անիսներին տրամադրվելու է 15 խոր. մետր, տարվա ընթացքում աճողական մինչև 180 խոր. մետր բնական գազի քանակության արժեքին համապատասխան գումար:

Ոռոգման ջրի համար նախատեսված աջակցությունը տրամադրվում է սահմանամերձ համայնքներում ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործված ոռոգման ջրի դիմաց՝ տվյալ տարում գանձվող վարձավճարների 50 տոկոսի չափով:

Ամբողջությամբ փոխհատուցվելու է նաև Հայաստանի Հանրապետության

սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող, հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկը և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկը:

Հունվարի 15-ին՝ ՀՀ կառավարության 2015թ. առաջին նիստի ժամանակ, որը վարել է ՀՀ վարչապետ Հովիվ Աբրահամյանը, հիմք ընդունելով «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի (տես էջ 3) 1-ին հոդվածը՝ ՀՀ կառավարությունը հաստատել է մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածք ունեցող այն սահմանամերձ գյուղական համայնքների ցանկը, որտեղ իրականացվող գործունեությունն ազատվում է հարկերից: Ցանկում ընդգրկված է Արարատի և Գեղարքունիքի մարզերի մեկական, Վայոց ձորի մարզի 5 և Տավուշի մարզի 24 համայնք:

Վարչապետ Հովիվ Աբրահամյանը նշել է, որ ստեղծվել է հանձնաժողով, որը հաշվարկում է վնասները, և կառավարությունը փոխհատուցելու է բոլոր այն քաղաքացիներին, ովքեր վնասներ են կրել այդ գնդակոծությունների հետևանքով: «Մենք շատ ուշադիր ենք և այսուհետ ևս շատ ուշադիր ենք լինելու բոլոր սահմանամերձ համայնքների ազգաբնակչության հոգեքիչ նկատմամբ», - եզրափակել է Հովիվ Աբրահամյանը:

Նշանակվել են ՏԿՄԻ նախարարի տեղակալներ

Հունվարի 13-ին, Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովիվ Աբրահամյանի որոշումներով Վաչե Տերտեղյանը նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ, իսկ Կարեն Իսախանյանը, Արտաշես Բախշյանը, Հայկարամ Մխիթարյանը և Դավիթ Կարապետյանը՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալներ:

Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը

Երևանի «Մարիոթ Արմենիա» ինդուստրիալ խորհրդի «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի ղեկավար կոմիտեի տարեկան նիստը: Ծրագիրը ունի 3 ուղղություն՝ աջակցություն իրավական բարեփոխումներին, կարողությունների զարգացում և համայնքների ընտրված ներկայացուցիչների առաջնորդության ամրապնդում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև 2015 թ. ծրագրային փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները: Ծրագիրը Հայաստանի համար եվրոպայի խորհրդի գործողությունների պլանի մի մասն է:

Նույն օրը տեղի ունեցավ եվրոպայի խորհրդի 2014 թ. տեղական իշխանությունների «Լավագույն գործելակերպ» ծրագրի մրցանակաբաշխությունը, որտեղ մրցանակներ հանձնվեցին ծրագրում հաղթած համայնքներին:

«Լավագույն գործելակերպ» բաղադրիչն իրականացվել է Դանիայի կառավարության կողմից ֆինանսավորվող և եվրոպայի խորհրդի կողմից ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության հետ իրականացվող «Ա-

ջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում:

Երևանում են գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Նաիրա Ավետիսյանը նշեց, որ պետք է գնահատել նրանց, ովքեր այս դժվարին



պայմաններում փորձում են որևէ լավ գործ անել իրենց համայնքի համար:

«Լավագույն գործելակերպ» ծրագիրը, որը հանդիսանում է եվրոպայի խորհրդի

տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնի առաջնային ծրագրերից մեկը,

Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը

1 >
առաջին անգամ իրականացվեց Հայաստանում 2014 թվականին: Ծրագրի նպատակն էր բացահայտել, հանրորեն ճանաչելի դարձնել և տարածել Հայաստանի համայնքներում կիրառվող լավագույն գործելակերպերը հետևյալ երեք ոլորտներում՝ քաղաքացիական մասնակցության խթանում, նախադպրոցական և արտադպրոցական կրթություն, տեղական արվեստների և արհեստների զարգացում:

Արարողությունը բացման խոսքով հանդես եկավ Եվրոպայի խորհրդի ժողովրդավարական հաստատությունների և կառավարման բաժնի ղեկավար պրն. Ա. Ջարդին:

Հաղթող են ճանաչվել. Նոր Երզնկան (Կոտայք) և Գոմք (Վայոց Ձոր) «Քաղաքացիական մասնակցության խթանում» ամրապնդման գումարով:

Գանձաբարը (Տավուշ) և Ջորավանը (Կոտայք) «Նախադպրոցական և արտադպրոցական կրթություն» ամրապնդման գումարով:

Ուրցածորը (Արարատ) և Գետափը (Վայոց Ձոր) «Տեղական արվեստների և արհեստների զարգացում» ամրապնդման գումարով:

Ծրագրի եզրափակիչ փուլ անցած և 6 համայնք (Ռինդ, Իջևան, Ախթալա, Քասախ, Վանաձոր, Աշտարակ) ստացան խրախուսական մրցանակ:

Հաղթող համայնքների ներկայացուցիչները 2014 թ. նոյեմբերին ճանաչողական այց են կատարել Եվրոպայի խորհուրդ՝ Ստրասբուրգ:

ՀՀ ՏԿԱԻ նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտոբյանը նշեց, որ այս ծրագրի շնորհիվ Եվրոպայի խորհուրդը աջակցում է ոչ միայն իրավական բարեփոխումներին ու քաղաքացիական մասնակցությանը, այլև՝ հնարավորություն է տալիս վեր հանել համայնքների կառավարման ու զարգացման լավագույն փորձը:

Ուրցածոր համայնքի ղեկավար Ռաֆիկ Անդրեասյանը շնորհակալական խոսքում շեշտեց, որ իրենք ու ռախ կլինեն, եթե բոլոր համայնքները

էլ մասնակցեն այս ծրագրին և իրենց օգտակար փորձով կիսվեն ուրիշներին հետ:

Գոմք համայնքի ղեկավար Մխիթար Յովհաննիսյանի խոսքով՝ իրենց ամենամեծ հաջողությունը համայնքի բնակիչների միավորումն է: Հանդես բերելով նախածեռնողականություն ու միավորելով գյուղի ակտիվին՝ համայնքում կառուցվել է խաղահրապարակ, ստեղծվել են երիտասարդական ու մանկական ժամանցի կենտրոններ, վերանորոգվել է համայնքապետարանի շենքը, իսկ ներկայումս աշխատանքներ են տարվում ճանապարհների վերանորոգման ու խմելու ջրի հարցը լուծելու ուղղությամբ:

Միջոցառման ավարտին ազգագրական պարերի հիշարժի գեղեցիկ ու ինքնատիպ կատարումով հանդես եկավ Գետափ համայնքի «Ձմրուխտ» համույթը:

Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում

Երևանի «Մարիոս Արմենիա» հյուրանոցում տեղի ունեցավ «Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում. Ուղերձ կառավարությանը» փաստաթղթի շնորհանդեսը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, արտաքին գործերի նախարարությունների, վերոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային մարմինների կոնգրեսի, Երևանում են գրասենյակի ներկայացուցիչներ, համայնքների ղեկավարներ, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՀ ՏԿԱԻ առաջին տեղակալ Վաչե Տերտոբյանը բացման խոսքում ընդգծեց մասնակցությունների կարևորությունը.

- Վստահեցնում են, որ որ-

պես ոլորտի համար պատասխանատու կառույց, մենք զարգացման ծրագրերում անպայման հաշվի կառնենք ներկայացվող առաջարկություններն ու նկատառումները:

2014թ. մարտին են տեղական և տարածաշրջանային մարմինների կոնգրեսն ընդունեց Հայաստանում տեղական ժողովրդավարության մասին թիվ 351-ի հանձնարարականը: Դրա եզրահանգումները տարածվելու և դրույթները գործնականում կիրառելի դարձնելու նպատակով անցած տարի Գյումրիում և Սիսիանում անցկացվեցին սեմինարներ: Այդ քննարկումներին մասնակցում էին տարբեր մարզերի ավելի քան 150 համայնքի ղեկավարներ ու ավագանու անդամներ, որոնք էլ մշակել են «Ուղերձ Հայաստանի կառավարությանը» փաստաթուղթը:

Այն ամփոփում է հիմնական արձագանքներն ու առաջարկությունները, որոնք արվել են համայնքների շուրջ 150 ղեկավարների և ավագանու անդամների կողմից՝ սուբսիդավորման սկզբունքի, տեղական ֆինանսների և հարկերի, տարածքային կազմակերպման և միջհամայնքային համագործակցության, ավագանիների դերի բարձրացման ու քաղաքացիների մասնակցության վերաբերյալ:

Երևանում են գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Նաիրա Ավետիսյանը կարևորեց այն հանգամանքը, որ փաստաթուղթը մշակվել է համայնքների ներկայացուցիչների ու են փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում:

Ուղերձն հանգամանալից ներկայացրեցին Հայաստանի



համայնքների միության, Համայնքների ֆինանսիստների միավորման և Հայաստանի ավագանիների ասոցիացիայի ներկայացուցիչները:

Հանդիպումը կազմակերպվել էր «Աջակցություն Հայաս-

տանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Երևանում են գրասենյակի միջոցով՝ Դանիալի կառավարության հովանավորությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

ՍԱՐՏԱՆԱՄԵՐԶ ՀԱՍՏԱՅՆՔԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատված գանկում ներառված սահմանմաները համայնքներին աջակցություն ցուցաբերելու գործընթացը:

Հոդված 2. Սահմանմաները համայնքի բնակչության ռեզիստորում հաշվառված և սահմանմաները համայնքում մշտական բնակչություն ունեցող ամենացածր բնական զազի, էլեկտրական էներգիայի և ոռոգման ջրի վարձավճարները մասամբ փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով:

Սահմանմաները համայնքի բնակչության ռեզիստորում հաշվառված և սահմանմաները համայնքում մշտական բնակչություն ունեցող՝ բնական զազի օգտագործման բաժանորդ չհանդիսացող ամենացածր Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից տրամադրվում է փոխհատուցում սույն հոդվածի 1-ին մասում նշված բնական զազի օգտագործման բաժանորդներին բնական զազի դիմաց տրամադրվող փոխհատուցման չափով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը փոխհատուցում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատված գանկում ներառված սահմանմաները համայնքների կողմից 2013 թվականին զազի և էլեկտրաէներգիայի տարեկան սպառման 1 բաժանորդի հաշվով միջինացված ծավալների ու տվյալ տարում փաստացի ծախսված ոռոգման ջրի վարձավճարի առնվազն 50 տոկոսը:

Փոխհատուցման ենթակա ծավալները և փոխհատուցման կարգը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության սահմանմաները համայնքների վարչական տարածքում գտնվող, հարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարը հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց ամուսնից նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե վճարվում է Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված գումարներից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

Հոդված 4. Սահմանմաները համայնքների՝ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով օբլանից զոհվելու դեպքում բնակիչներից Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մեկամսյա ժամկետում ապահովում է համարժեք օբլանի հնարավորությամբ՝ նույն համայնքի տարածքում:

Հոդված 5. Սահմանմաները համայնքներում և դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից կամ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով վիրավորված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բժշկական օգնություն ու սպասարկում իրականացվում են պետապատվերի շրջանակներում:

Հոդված 6. Սահմանմաները համայնքներում և դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից կամ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով զոհված քաղաքացիների ընտանիքներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրվում է միանվագ օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով և չափով՝ հուղարկավորության և գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման ու տեղադրման ծախսերի համար:

Հոդված 7. Սույն օրենքի 4-6-րդ հոդվածների դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա:

Սույն օրենքի ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2018 թվականի հունվարի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հողված 1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած Ցանկում (այսուհետ՝ Ցանկ) ներառված՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանափակ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու հետ կապված հարաբերությունները:

Հողված 2. Սույն օրենքի իմաստով սահմանափակ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը է համարվում Ցանկում ներառված համայնքների վարչական սահմաններում՝

1) առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատների միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունը:

2) տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության կազմակերպումը՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է իրացվում պատրաստի արտադրանքը՝ Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքների վարչական սահմաններում, թե դրանցից դուրս:

3) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը, բացառությամբ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության:

Հողված 3. Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու արտոնությունները կիրառությունը նշանակում է, որ՝

1) այդ համայնքների վարչական սահմաններում գտնվող առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատների միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից, իսկ այդ գործունեությունն իրականացնող և շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից:

2) տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

ա. իրաջունից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից,

բ. օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից,

գ. իրաջունից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահութահարկից կամ եկամտային հարկից:

3) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը, բացառությամբ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության, ազատվում է արտոնագրային վճարից, իսկ այդ գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից:

4) կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձարտությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի և սոցիալական վճարի:

Հողված 4. Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով՝

1) վարում են եկամուտների և ծախսերի առանձնացված հաշվառում (կազմակերպությունների հա-

մար՝ առանձնացված հաշվապահական հաշվառում), որի հիման վրա հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամուտը, ինչպես նաև այդ գործունեությունների հետ կապված ծախսերը հարկման նպատակով նվազեցվում են համապատասխանաբար նույն ժամանակաշրջանում Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով ստացվող համախառն եկամտի և դրա հետ կապված ծախսերի գումարի չափով: Եթե Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքներում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի որոշ տեսակների մասով հնարավոր չէ վարել առանձնացված հաշվառում, ապա այդ ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ծախսերից հարկման նպատակով նվազեցվում են հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամտի մեջ



Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով հաշվարկված համախառն եկամտի տեսակարար կշիռն համապատասխան: Առանձնացված հաշվառում վարելու արդյունքներն արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում և հայտարարագրերում:

2) իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) գծով գնորդների համար (ծառայություններից օգտվողների համար) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում) նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ և օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին են ներկայացնում հաշվարկներ, հայտարարագրեր, հարկային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր և տեղեկություններ:

Հողված 5. Եթե Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արձանագրվում է ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում (այդ թվում՝ Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքների վարչական սահմաններից դուրս իրականացվող առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով), ապա՝

1) տարվա ընթացքում առաջին անգամ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում կիրառվում է նախազգուշացում:

2) տարվա ընթացքում երկրորդ անգամ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օր-

վանից (բացառությամբ սույն հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի) հարկ վճարողը դադարում է օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

Սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառությունից հետո արձանագրվող՝ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտումների դեպքում կիրառվում են հարկային օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները:

Եթե «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում լինելու մասին ստուգման ակտը կամ ստուգում իրականացնող անձանց գործողությունները սահմանված կարգով բողոքարկվել են, ապա դիմում-զանգասող մերժվելու մասին որոշումը պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում: Դիմում-զանգասող բավարարվելու կամ դիմում-զանգասող մերժվելու վերաբերյալ որոշումը ստուգման կարգով չեղյալ ճանաչվելու դեպքերում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողը շարունակում է օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից այն պահից, որ պահից, ստուգման ակտի համաձայն, դադարել էր օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից:



Եթե Ցանկում ներառված սահմանները գյուղական համայնքներում գործունեություն իրականացնող ավելացված արժեքի հարկ վճարողի մոտ արձանագրվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բաղկացուցիչ մաս կազմող 4-րդ հավելվածով սահմանված կարգի խախտում (անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման կամ առաքվող կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցվելու դեպք), կամ եթե հավելվածում նշված սահմանները գյուղական համայնքներում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ արձանագրվում է անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման դեպք, ապա՝

1) տարվա ընթացքում առաջին խախտումն արձանագրվելու դեպքում կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

2) տարվա ընթացքում երկրորդ խախտումն արձանագրվելու դեպքում կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը, և համապատասխան վարչական ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է օգտվել շրջանառության հարկից կամ ավելացված արժեքի հարկից և շահութահարկից (եկամտային հարկից) ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

Հողված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐԿՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՒՀԱՏՈՒՅՄԱՆ ԵՆԹԱԿԱԾ ԾԱՎԱԼՆԵՐԻ, ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՓՈՒՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 271-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) «Գոցալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ընտանիքների բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման ու գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:



2. Առաջարկել՝

1) «Գագպարոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում սույն որոշման N 1 հավելվածում ընդգրկված սահմանամերձ համայնքների բնական գազ սպառող բնակիչ-բաժանորդներից հաշվարկային տարում գումարային մինչև 360 խոր. մետր բնական գազի քանակությունների համար վճարումները գանձել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 տոկոսի չափով (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ընդ որում, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագնի և «Գագպարոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից գանձվող զնի տարբերության գումարը յուրաքանչյուր բնակիչ-բաժանորդի հաշվարկով գումարային մինչև 360 խոր. մետր բնական գազի քանակությունների համար կփոխհատուցվի «Գագպարոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշման N 2 հավելվածի համաձայն.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում սույն որոշման N1 հավելվածում ընդգրկված սահմանամերձ համայնքների էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդներից հաշվարկային տարում գումարային մինչև 1440 կվտ/ժ էլեկտրաէներգիայի քանակությունների համար վճարումները գանձել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 տոկոսի չափով (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ընդ որում, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագնի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից գանձվող զնի տարբերության գումարը յուրաքանչյուր բնակիչ-բաժանորդի հաշվարկով գումարային մինչև 1440 կվտ/ժ էլեկտրաէներգիայի քանակությունների համար կփոխհատուցվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշման N2 հավելվածի համաձայն:

3. Սահմանել, որ՝

1) 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում սույն որոշման N 1 հավելվածում ընդգրկված սահմանամերձ համայնքներում ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործված ոռոգման ջրի դիմաց տվյալ տարում գանձվող վարձավճարների 50 տոկոսը կփոխհատուցվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ սույն որոշման N 2 հավելվածի համաձայն.

2) Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների վարչապետի տարածքում գտնվող, մարտական գործողությունների հետևանքով չօգ-

տագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարը հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից համապատասխան համայնքի բյուջե կվճարվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ սույն որոշման N 2 հավելվածի համաձայն: Սույն ենթակետի դրույթը չի տարածվում Հայաստանի Հանրապետության օրենքներով հողի հարկից ազատված հողատարածքների վրա, որոնց համար հաշվարկված հողի հարկի գումարն օրենքի համաձայն ենթակա է փոխհատուցման համայնքների բյուջեներին՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի «Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց և ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված այդ համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզպետարաններին ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին գումար հատկացնելու մասին» N 271-Ն որոշման 1-ին կետը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ՝

ԳՈՎԻԿ ԱՐՄԱՅԱՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ

Սարգը	Համայնքը
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ	Երասխ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ	Վահան քաղ. ճամբարակ
Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ	Խաչիկ Խնձորուտ Սերս Նոր Ազնաբերդ Բարձրունի
Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ	Ն.Կ. Աղբյուր Ոսկեվան 2Պրաքան Կորք Վազաշեն Բերքաբեր Ոսկեպար 2Ինարի Արծվաբերդ Ծաղկավան (Իջ. շրջ.) Մոսեսզեղ Դովեղ Պառավաքար Բերդական Բարեկամավան Կոթի Բաղամիս Սարիգյուղ Այգեձոր Կիրանց Այգեպար Սևքար Այգեհովիտ Վ.Կ. Աղբյուր

Համարի պատասխանատու՝ Տ. Նիկողոսյան

Լրատվական գործունեություն իրականացնող «Հայաստանի ավագանիների ասոցիացիա»-ի 34:
Հասցեն՝ Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ 58-77-41:
Գրանցման վկայական՝ 03Ա 053385:
Տպագրվել է «Մտամպա» տպագրատանը: Տպաքանակը՝ 1500:
Հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Մեջբերելիս հղումը «Ավագանի+»-ին պարտադիր է:
Էլ. փոստ՝ avagani@doiphin.am www.avagani.am
Թերթի տարածումը՝ անվճար: